

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 5·

ԱՐՕՏ

ՄԱՅԻՍ 31·
1867·

ԱՄՍԱԳԻՐ

ԱՕԳՈՒՑԻՆ· ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒԴԵՒՈՐՈՒԹԻՒՆ Տ· Տ· ԳԵՈՐԳԱՑ ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի Կ· ՊՕԼՍՈՅ Ի ՏՓԽԻՍ (1)

Ղ.ՈՐԴ Վ. Հ. խափառութիւնը մարտի 28 ին, ժամ 5 ին Օրթագիւղի Մաքսուտեան վերմաշուք Սիմոնիկ էֆէնտիին ամարանոցին մէջ ապգային երեւելիներուն վերջին այցելութիւնները ընդունելէն յետոյ՝ եկեղեցական հանդիսիս ինքնաբ ի ծովեզերքը, ուր բոլոր խուռն բազմութեան իւր հայրապետական օրհնութիւնները ու հրաժարական ողջոյները մատուցանելով՝ քառաթի նաւակաւ մեկնեցաւ ի շոգենաւ, որ յատկապէս Ն. Վ. Հ. համար պատրաստուած էր ի կողմանէ մեծազօր Կայսեր Ռուսիոյ, որ և ի պատիւ Ն. Վ. Հ. խոշանիշ դրօշակը պարզած էր։ Յամին 6 էր՝ երբ ճանապարհ ելաւ ամենայն յաջողութեամբ, հեռաւ տանելով բոլոր ապգին համակրութիւնը ու որդիական սէրը, որոնք իրենց ապագայ մեծամեծ ակնկալութեանց և Ն. Սրբութեան վերայ ունեցած ապահովութեց երաշխիքն ու գրաւականն են։ Ն. Վ. Հ. ուղեկից եղան՝ Պոլսոյ Ազգ. Վարչութեան կողմէ Գեր. Յովհաննէս վարդապետը Սեթեան, Գեր. Խաչէն վարդապետը Գալֆայեան, Մեծ.

(1) Այն յօդուածը Տփխիսէն իրկած են մեզ Սիոնի մէջ հրատարակելու համար։

digitised by A.R.A.R.@

Աբեդիկ էֆէնտին Լէվոնեան, Մեծ. մահտեսի Մանուք աղայն Մուրատեան։ Սուրբ Հրուսաղէմի Ամեն. Սրբազան Պատրիարքի և միաբանութեան կողմէն Արժ. Միմէօն վարդապետը Եֆէրեանց՝ տեղապահ Պոլսոյ փոխանորդի։ Նոյնպէս Ղալաթեան Պեր. Սարգիս Սրբազանը և Մուշեղեան Արժ. Գրիգոր վարդապետը, որոնք հրաւիրակ եկած էին ի Կ. Պոլիս մայր Աթոռոյն կողմէն։

Մարտ 31 ին, առաւօտեան ժամը մէկին խաղաղութեամբ կը հասնին ի նաւահանգիստն Փոթի։ Հոն շոգենաւուն մէջ կը ներկայանայ տեղւոյն քաղաքապետը իւր համազգեստով, և կը շնորհաւորէ Ն. Ա. Հ. ի Մուսաստան ժամանիլը, և յատկապէս Կովկասեան սահմանաց Խարձրա. Միխայէլ մեծ Դքսի կողմանէն՝ իրեն եղած յանձնարարութիւնը կը յայտնէ ամենայն փառաւորութեամբ ընդունելու զՆ. Ա. Հ. հափառութիւնը. որ և նա իւր կողմանէ խորին շնորհակալութիւն յայտնելով, և իրեն համար պատրաստուած նաւակն իջնելով կ'ելնեն ցամաք։ Օրվ. եղեբքը խիստ գեղեցիկ զարդարուած էր դաբէնիներով և կերպասներով. հոն դիմաւորեց զՆ. Ա. Հ. Պեր. Սակար Սրբազան արքեպիսկոպոսը հանդերձ ժողովրդովք՝ շնորհաւորելով նորա գալուստը։ Նէ գնացին անկէ ուղղակի քաղաքապետի տունը, ուր մեծ պատրաստութիւն եղած էր Ն. Ա. Հ. համար։ Հոն տէր Միմաւոնեան Նիկողոս աղայն համառօտ ճառ մի խօսեցաւ լի ազգային սիրոյ զգացմամբք, որուն պատասխանեց Ա. Հ. Հայրապետը իւր օրհնութեամբը։ Նոյն գիշերը ծովեղերքը լուսաւորուած էր, ուր զանազան տեսակ հրախաղութիւն եւս եղան ի պատիւ Ն. Ա. Հափառութեան։

Ապրիլի առաջին օրը Փոթիէն մեկնելով հասան ի Մառան, ուր նոյնպէս քաղաքապետը դիմաւորեց զինքը. և հետեւեալ օրը մտան ի Թուիսա. հոն բոլոր հայազգի ժողովուրդը և տեղութեան քաղաքական պաշտօնակալք դէմ ելնելով՝ մեծ ջերմեռանդութիւն կը մատնոյցին Ն. Ա. Հ. ամբողջելու։ Նոյն գիշերը հոն հանդիսացաւ եկեղեցւոյ երէցփոխան Մեծ. Սահմանն աղային բնակարանը, ուր ժողովրդեան արդի վիճակին վերաբերեալ տեղեկութիւններ ստանալով Ն. Ա. Հ. հրամայեց որ աղջկանց հաւմար ալ դպրոց մի հաստատեն և պէտք եղած ձեռնտուութիւնն ալ ընելու խոստացաւ։

Ամսոյն 4 ին հասան ի Սիւրէմ, ուր տեղ զինքը դիմաւորեցին հայ և վրացի ժողովուրդք ամենայն խանդութեամբ։ Հետեւեալ օրը հասան ի Կուրի, ուր տեղի ընդունելութեան հանդէսը աւելի փառաւորութեամբ էր. երեկոյին շքեղազարդ սեղան պատրաստեց իւր տունը Մեծ. Աղէքսանդր Ալիխանովը։ 6 ին հասան ի Ծիլիա. ի սդասիօնը, ուր հիւրընկալեցին զՆ. Ա. Հ. Տփխեցի վաճառականք. եւ նոյն երեկոյին փառաւոր սեղան պատրաստած էր երեւելի վաճառականը Շասպով։ 7 ին՝ ուղեկցութեամբ յիշեալ վաճառականաց և մեծ բազմութեամբ վերադարձ ժամուն մտաւ Ն. Ա. Հ. ի Տփխիս։ Քաղաքին մէկ ժամ մնացած տեղ՝ յատուկ կառքեր պատրաստուած էին թէ Ա. Հ. Հայրապետին և թէ իւր ուղեկցաց համար, որոնց մէջ կարգաւ բազմեցան։ Հոն դիմաւորեցին ըստ սովորութեան տեղւոյն՝ բոլոր արհեստապործք իրենց յատկացեալ դրօշներովը. և Խարձր. փոխարքային թիկնապահ զօրքերը և բոլոր հասարակութիւնը Սրբազնասուրբ Հայրապետին երջանիկ գալուստը կը

digitised by A.R.A.R.@

շնորհաւորէին։ Այսպէս խուռն բազմութեամբ հասան մինչեւ Փոխաբքայի պալատին առաջը, ուր բոլոր կղերական ուխտը եկեղեցական զգեստներով դիմաւորեցին. և Արքեպիսկոպոսը Այրապետը կառքէն իջնելով՝ և զգեստաւորուած գնաց ի մայր եկեղեցին, ուր Վեր. Մակար Արքեպիսկոպոսը ի շնորհաւորութիւն Ն. Վ. Հ. երջանիկ գահատեանը՝ համառօտ բայց ազդու առեներաներութիւն մի խօսեցաւ, զոր քիչ մի վարը պիտի տեսնենք։ Յետոյ որոյ Վ. Հ. Այրապետը առեներաներութիւն մի բրաւ և օրհնեց զժողովուրդը, և զՎ. Հ. Կայսրն ամենայն Ռուսաց. և մեկնեցաւ ի Վ. Հարանն։

Նոյն ամսոյ 9 ին Վ. Հ. Այրապետը ներկայացաւ Խարձ. իշխանին Վ. Բրատանու՝ մեծ Դէքսին Միխայէլ, որ մեծ և արժանաւոր պատուով ընդունեց զինքը։ Այս եղանակաւ էր նորա ներկայացման եղանակը. բաց կառքի մէջ նստած էր Ն. Վ. Եհափառութիւնը՝ Վսեմ. Օ. ինէյիէֆ զօրապետին հետ. երկրորդ կառքին մէջ Վեր. Սարգիս և Մակար արքեպիսկոպոսունք. երրորդ կառքին՝ Այրմ. Յովհաննէս և Միմէօն վարդապետք. չորրորդին՝ Այրմ. Պետրոս և Խորէն վարդապետք. հինգերորդին՝ Այրմ. Մերոբէ վարդապետ և Վեր. Յովհաննէս եպիսկոպոս. վեցերորդին՝ Այրմ. Սոմփան վարդապետ եւայլն. եօթներորդին՝ Ն. Ն. Դ. Բ. Էֆէնտին և Մաղաք աղայն եւայլն։ Այս օրինակ հանդէսով գնաց Խարձ. Փոխաբքային պալատը, ուր մեծ սրահի մի մէջ հինգ բոպէի չափ սպասելով՝ Փոխաբքայի սենեկապետ Օ. ինէյիէֆ զօրապետի առաջնորդութեամբ այն տեղ՝ ուր կանգնած կը սպասէին 40 ի չափ զօրապետներ։ Դահլիճին մէջտեղը դիմաւորեց Խարձ. մեծ Իշխանը զՆ. Վ. Եհափառութիւնը, և կայնեցաւ դահլիճին ճակատը Վ. Եհափառ Կայսեր սրատկերին առաջը, երեսը դէպ ի Վ. Հ. Այրապետին դարձուցած. իւր ձախակողմը դրած էր սեղանի մի վերայ Կաթողիկոսական կնդակը և Աղեքսանդր Նէւսքիի առաջին կարգի նշանը։ Խարձ. Իշխանը Վ. Հ. Այրապետին Կաթողիկոսութիւնը և ի Ռուսաստան գալը շնորհաւորեց, և յետ այնորիկ ներկայացուց կաթողիկոսական հրովարտակը, ըսելով՝ թէ "Այսոց ազգը ըզՁեզ Կաթողիկոս ընտրած է, և մեծ Ինքնակալ ամենողորմած Կայսրը կը հաստատէ զՁեզ նոյն պաշտօնին մէջ"։ Յետոյ նշանը մատոյց իրեն, ըսելով. "Ամենողորմած Կայսրը այսու կը պատուէ զՁեզ, և ուրախ եմ որ զՁեզ առաջին անգամ կը տեսնեմ Ռուսիոյ Կայսերութեան ասպետական նշանովը"։ Վ. Հ. Այրապետը ամենայն խոնարհութեամբ և պարտուպատշաճ ակնածութեամբ ընդունելով բարեմաղթութիւններ ըրաւ, և ուրբաց ըսելով՝ թէ իմ ազգս ու ես յոյս ունիմք մեծազօր Կայսեր շնորհքները վայելելու։

Յետոյ Խարձ. մեծ Իշխանը խրնդրեց Վ. Հ. Այրապետէն որ իւր հետ եղող եկեղեցական անձինքը ներկայացնել իրեն. և նախ Վեր. Սարգիս և Մակար եպիսկոպոսունք, ապա Այրմ. Պետրոս վարդապետը ներկայացան. յետոյ Տաճկաստանէն հետը գնացող ուղեկիցները իւրաքանչիւր կարգաւ ներկայացան։ Այն արարողութենէս ետքը Խարձ. մեծ Իշխանը հետն առնելով զՆ. Վ. Եհափառութիւնը իւր առանձնասենեակը տարաւ, ուր մնաց կէս ժամու չափ. և բոլոր հոն գտնուողներուն խահուէով թէով պատուելէն զկնի՝ վերադարձաւ Ն. Վ. Հ. ի Վ. Հարանն։

digitised by A.R.A.R.@

Մանաւանդ դիտողութիւն արժանի է, ինչպէս կը գրէ մեր Թղթակիցը, Կաթողիկոսական հրամանագրի, որուն մէջ կ'ըսէ Աստ. Կայսրը, թէ «Զեզ ողիզ ընդունելոյ Ես հաստատելոյ. և իբրեւ դեռ ոչ ինչ ոչ ոչ ոչ Զեզ իրրեւ ոչ ոչ ոչ